Արձանագրություն N 3/2

ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Ալավերդի

11.09.2018թ.
Ժամը 12:00

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ) | Ա. Աբեյան |
| Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) | Վ. Մինասյան, Կ.Միմոնյան |
| Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) | Հ. Շալաղոյան, Կ.Կռնինյան |
| Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) | Գ.Հովակիմյան |

1. ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման ԳՀ ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստի անցկացման վայրը, օրը և ժամը.

1.1. ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման ԳՀ ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստ անց է կացվել 2018թ. սեպտեմբերի 11-ին, ժամը 12:00-ին Ալավերդու համայնքապետարանում, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1 հասցեում:

2. ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման ԳՀ ընթացակարգի մասնակցի կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում և հրավերի պահանջներին համապատասխանության մասին տեղեկատվություն.

---

(Ա. Աբեյան)

2.1 «Ռեդինետ» ՓԲԸ ընկերության կողմից էլեկտրոնային ձևով ԳՀ ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին վերաբերվող սահմանված ժամկետում ներկայացված փաստաթղթերը ամբողջական չեն (մասնակցի կողմից ներկայացված պայմանագիրը թերի է` բացակայում է պայմանագրի գումար դաշտը, պայմանագրի հանձնման ընդունման ակտը և հարկային հաշիվը անհամապատասխան են, բացակայում են հիմնական աշխատակազմում ընդգրկված մասնագետների որակավորումը հավաստող փաստաթղթերի (դիպլոմ, վկայագիր, հավաստագիր և այլն) պատճենները, մասնակցի կողմից չի ներկայացվել պահանջվող տեխնիկական միջոցի տեխնիկական անձնագիրը): Հրավերի պահանջին համապատասխան փաստաթղթերը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

3. ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում և հրավերի պահանջներին համապատասխան տեղեկատվության տրամադրման մասին.

---

(Ա. Աբեյան)

3.1 ՀՀ Կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում տրամադրվել է համապատասխան տեղեկատվություն: Ըստ որի, մասնակից «Ռեդինետ» ՓԲԸ -ն հայտ ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ Կառավարության 2017թ. մայիսի 4-ի Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 43-րդ կետի 3-րդ մասով նախատեսված տվյալների համաձայն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չի ունեցել օրենքով սահմանված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ և բավարարում է հրավերով սահմանված «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին:

4. Հիմք ընդունելով վերոգրյալը հանձնաժողովը որոշեց.

4.1 Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 47-րդ կետի, ինչպես նաև հրավերի 1-ին մասի 7.19 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգի պահանջի, «Ռեդինետ» ՓԲԸ-ին հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին վերաբերվող փաստաթղթերի անհամապատասխանության շտկման նպատակով տրամադրել մեկ աշխատանքային օր:

5. ԼՄԱՀ-ԳՀԱՇՁԲ-18/16 ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա 4.1 կետում նշված ժամկետին հաջորդող աշխատանքային օրը, ժամը 12:00-ին, Ալավերդու համայնքապետարանում, ք. Ալավերդի, Զորավար Անդրանիկի 8/1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ Կողմ-5,Դեմ-0:

Հանձնաժողովի.

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱՊ) Ա. Աբելյան

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) Վ. Մինասյան

Գնման Պատասխանատու/Գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԳԱ) Կ.Սիմոնյան

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) Հ. Շալադոյան

Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմի պատասխանատու(ԳՊ/ԲԱ) Կ.Կոնինյան

Գնման Պատասխանատու/Մրցույթի համակարգող (ԳՊ/ՄՀմ) Գ.Հովակիմյան